

ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻՄ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

1.1. Քրեական վարույթի շրջանակներում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգրքը) 172-րդ հոդվածի 3.2-րդ մասում նշված տեղեկությունների (այսուհետ նաև՝ Տեղեկություններ) պաշտպանության և բացահայտման հարցը սերտորեն առնչվում է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության ապահովման քրեական դատավարության հիմնաքարային խնդրին: Հարկ է նշել, որ սահմանադրորեն պաշտպանվող շահերի հավասարակշռությունը քրեական դատավարության ոլորտում ենթադրում է հանրային և մասնավոր շահերի անհրաժեշտ և արդարացի հավասարակշռության ապահովում, մասնավորապես՝ մի կողմից՝ քրեական դատավարության մասնակիցների իրավունքների և ազատությունների պաշտպանության, մյուս կողմից՝ վարույթն իրականացնող մարմինների գործառնությունների արդյունավետ իրականացման հավասարակշռում, ինչպես նաև քրեական դատավարության առանձին մասնակիցների և տուժողի՝ սահմանադրորեն պաշտպանվող իրավունքների և օրինական շահերի հավասարակշռում:

Նշվածից ուղղակիորեն բխում է, որ Տեղեկությունների պահպանության իրավական ռեժիմը սահմանելիս օրենսդիրը պետք է սահմանի այնպիսի կառուցակարգեր, որոնք մի կողմից կապահովեն նշված տեղեկությունների բարձր պաշտպանվածությունը հանցագործությունների կանխման, խափանման և դրանց բացահայտմանն ուղղված գործունեության ընթացքում, մյուս կողմից չեն ստեղծի անհամաչափ կամ անհաղթահարելի սահմանափակումներ հանցագործությունների բացահայտման նպատակով դրանց օգտագործման համար:

1.2. Օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասի համաձայն՝ «Քրեական հետապնդում իրականացնող մարմինները քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկությունները, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են ստանալ խուզարկության կամ առգրավման վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա»:

Օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «(...) Բանկային, նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման համար խուզարկությունը կամ առգրավումը կատարվում է դատարանի որոշման հիման վրա»:

«Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Բանկերը քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրում են միայն դատարանի որոշման հիման վրա՝ սույն օրենքին և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան»:

«Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում և Օրենսգրքում ամրագրված վերոշարադրյալ դրույթների համակարգային վերլուծությունից բխում է, որ խուզարկության կամ առգրավման վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկությունները, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են ձեռք բերվել բացառապես ՀՀ քրեադատավարական օրենքով սահմանված կարգով որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձի վերաբերյալ:

1.3. Նախորդ կետում մեջբերված իրավակարգավորումները դիտարկելով հիմնավորման 1.1 կետում կատարված իրավական վերլուծությունների լույսի ներքո՝ կարծում ենք, որ Օրենսգրքի 172-

րդ հոդվածի 3.2-րդ մասի, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջն առ այն, որ կոնկրետ քրեական գործի շրջանակներում մինչդատական վարույթն իրականացնող մարմինը դատարանի որոշման հիման վրա կարող է ստանալ միայն բանկի այն հաճախորդի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, ով Օրենսգրքով սահմանված կարգով ներգրավվել է որպես կասկածյալ կամ մեղադրյալ, խախտում է քրեական դատավարության ոլորտում հանրային և մասնավոր շահերի անհրաժեշտ և արդարացի հավասարակշռությունը, քանի որ ստեղծում է անհամաչափ կամ անհաղթահարելի սահմանափակումներ հանցագործությունների կանխման, խափանման և դրանց բացահայտմանն ուղղված գործունեության ընթացքում:

Հարկ է նշել, որ բազմաթիվ գործերով հանցագործության ամբողջական բացահայտման համար անհրաժեշտ է ստանալ Տեղեկություններն այն դեպքում, երբ հանցագործություն կատարած անձը հայտնի չէ կամ բանկային գաղտնիքի ստացումն անհրաժեշտ է հենց հանցանք կատարած անձին հայտնաբերելու համար: Ավելին, շատ հաճախ թեև հանցանք կատարած անձը հայտնի է և ունի կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ, բայց այնքանով, որքանով վերջինս հանցանքը կատարել է ոչ թե իր, այլ ուրիշ անձանց անվամբ բանկային ծառայություններից օգտվելու միջոցով, բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ստացումը հնարավոր չէ: Օրինակ՝ այն դեպքերում, երբ անձը, այլ անձանց անվամբ կեղծ ոսկու գրավադրմամբ, խաբեության միջոցով գումար է հավաքակալում բանկից: **Հանցագործությունն ամբողջությամբ բացահայտել հնարավոր չէ նաև ապօրինի հարստացման, կաշառք ստանալու գործերով այն իրավիճակներում, երբ օրինակ, գումարը ստացվել է կամ փոխանցվել (մուտքագրվել) է ոչ թե հանցավորի, այլ մեկ ուրիշի բանկային հաշվին:**

Անդրադառնալով միջազգային փորձին՝ պետք է նշել, որ տարբեր երկրներում անձի վերաբերյալ բանկային կամ ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունների կամ արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ ստացման հնարավորությունը չի կապվում անձի բացառապես մեղադրյալի կամ կասկածյալի կարգավիճակ ունենալու հետ:

Որպես օրինակ՝ Հյուսիսային Եվրոպայի, մասնավորապես՝ Սկանդինավյան երկրների ներպետական օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տվյալ երկրներում առկա չէ բանկային տվյալների տրամադրման սուբյեկտային սահմանափակում:

Շվեդիայի բանկային և ֆինանսական գործունեությունը կարգավորող օրենքը նախատեսում է այդպիսի գործունեություն ծավալող կազմակերպությունների կողմից՝ հաճախորդների տվյալների գաղտնիության պահպանման պարտականությունը:¹ Միևնույն ժամանակ նույն ակտը նախատեսում է ֆինանսական կազմակերպությունների պարտականությունը՝ **նախաքննությունը վարող քննիչի կամ միջազգային փոխօգնության հարցերով դիմած դատախազի պահանջով անմիջապես և էլեկտրոնային եղանակով բացահայտել իրենց հասանելի տվյալները**:² Ընդ որում, համապատասխան պահանջով դիմած քննիչը կամ դատախազը կարող են կայացնել որոշում՝ որոշակի ժամանակով արգելելով տեղեկատվությունը տրամադրած հաստատությանը տեղեկատվության տրամադրման մասին հայտնել հաճախորդին կամ այլ երրորդ անձի:³

Նորվեգիայի ֆինանսական հաստատությունների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը նախատեսում է վերջիններիս պարտականությունը չբացահայտել հաստատության հաճախորդների վերաբերյալ հավաքված ցանկացած տեղեկատվություն և ապահովել, որ այդպիսի տեղեկատվությունը հասանելի չդառնա երրորդ անձանց:⁴ Միևնույն ժամանակ, Քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է, որ անձինք, ովքեր ֆինանսական հաստատությունների գործունեությունը կարգավորող օրենսդրության հիման վրա, կրում են գաղտնիության պահպանման պարտականություն, պարտավոր են որպես վկա բացատրություններ ներկայացնել ոստիկանությանը այն հանգամանքների վերաբերյալ, որոնք պաշտպանվում են որպես

¹ (Lag (2004:297) om bank- och Finansieringsrörelse), Շվեդիայի՝ Բանկային և ֆինանսական գործունեության մասին օրենք (2004), Հոդված 10.

² Տես նույն տեղում, Հոդված 11.

³ Տես նույն տեղում, Հոդված 12.

⁴ Lov om finansforetak og finanskonsern (finansforetaksloven), Նորվեգիայի՝ Ֆինանսական գործունեության ակտ (2015թ.), Հոդված 9-6, 9-7, 16-1.

զաղտնիք:⁵ Անհրաժեշտությամբ պայմանավորված, այդպիսի պարտականությունը կարող է ծագել նաև մինչև քրեական գործի հարուցումը:⁶

Հարկ է նաև նշել, որ **ՏՀԶԿ «Հակակոռուպցիոն բարեփոխումներ Հայաստանում» Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի երրորդ փուլի զեկույցով** (ընդունվել է 2014 թվականի հոկտեմբերի 8-10-ը Փարիզում տեղի ունեցած ՀԿՑ-ի հանդիպման ժամանակ) հղում է կատարվել նախկինում արված թիվ 2.8 առաջարկությանը, մասնավորապես առ այն, որ. «Հայաստանը պետք է ապահովի, որ անհրաժեշտության դեպքում իրավապահ մարմինների համար մատչելի լինեն ֆինանսական տվյալները՝ կոռուպցիոն հանցագործությունները բացահայտելու և քննելու նպատակով: Մատչելի դարձնել, մասնավորապես, հանցագործությունների քննության ժամանակ կասկածյալից ու մեղադրյալից բացի այլ անձանց, այդ թվում, օրինակ՝ ընտանիքի անդամների կամ փոխկապակցված այլ անձանց ֆինանսական տվյալները, երբ առկա են բավարար կասկածներ, որ նշված անձինք մասնակցել, օժանդակել են հանցագործություն կատարելուն կամ տեղյակ են եղել կատարված հանցագործությանը, կամ երբ հիմքեր կան կասկածելու, որ գումարը տրամադրվել է կասկածյալի կողմից առանց որեւէ իրավական հիմնավորման՝ պահպանելով տվյալների պաշտպանության միջազգային ստանդարտները: (...)»⁷

Նախկինում արված համապատասխան առաջարկության վերաբերյալ զեկույցը արձանագրել է, որ չեն իրականացվել անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները, մասնավորապես զեկույցում նշվել է, որ. «Մոնիթորինգի երրորդ փուլի ժամանակ, ի պատասխան առաջարկության այդ մասի, որեւէ ընթացակարգային դրույթ չի փոփոխվել, և որեւէ այլ մեխանիզմ, որով կարող էր հեշտացվել իրավապահ մարմինների համար բանկային, ֆինանսական և առևտրային փաստաթղթերի մատչելիությունը, չի ներդրվել: Հայաստանի իշխանությունները զեկույցեցին, որ ի պատասխան այդ առաջարկության առաջին մասի, սկզբնապես մշակվել էին երկու օրենսդրական նախագծեր՝ «Բանկային գաղտնիքի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը և «Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը: Այնուամենայնիվ, հետագայում որոշվել է այդ նախագծերը մի կողմ թողնել և հարցը լուծել Քրեական դատավարության օրենսգրքի բարեփոխումների համատեքստում: (...)»⁸

ՏՀԶԿ «Հակակոռուպցիոն բարեփոխումներ Հայաստանում» Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի չորրորդ փուլի զեկույցով (ընդունվել է 2018 թվականի հուլիսի 4-ին Փարիզում տեղի ունեցած ՀԿՑ-ի հանդիպման ժամանակ) արձանագրվել է, որ. «Գործնականում, մշտադիտարկող խմբի տեսանկյունից, ֆինանսական տեղեկատվության հասանելիության համար [գործող օրենսդրության] դժվարին նախապայմանները կոռուպցիոն հանցագործությունները քննությունը կարող են դարձնել չափազանց դժվար՝ անգամ պարզապես հաղորդումը ստանալու փուլից առաջ անցնելու համար:»⁹

Նույն զեկույցով բանկային և ֆինանսական գաղտնիքի մասով ընդհանուր պահանջներին համապատասխանությունը գնահատվել է «մասնակի» (partially compliant) 4՝ հնարավոր (fully, largely, partially, not compliant) տարբերակներից: Համապատասխանաբար, զեկույցում կրկին արվել է առաջարկ ֆինանսական տեղեկատվության հասանելիության վերաբերյալ, մասնավորապես թիվ 22.2 առաջարկը ձևակերպվել է հետևյալ կերպ. «Միջազգային չափանիշներին համապատասխան

⁵ Lov om rettergangsmåten i straffesaker (Straffeprosessloven), Նորվեգիայի՝ Քրեական դատավարության ակտ (1981թ"), Հոդված 230.

⁶ Տես նույն տեղում.

⁷ OECD, Anti-corruption Reforms in Armenia, Round 3 Monitoring of the Istanbul Anti-Corruption Action Plan, adopted at the ACN meeting on 8-10 October 2014, Paris., 38-39 «Armenia should ensure that law enforcement agencies have necessary access to financial data for detecting and investigating corruption-related offences. In particular, allow access to financial data of a broader range of persons than suspects and accused persons in criminal investigations, including, for example, family members or other close persons, when there are enough suspicions that those persons participated, helped or are aware of the committed crime or when there are grounds to believe that the money are provided by the suspect without any legal justification, respecting international standards for data protection. [222]».

⁸ Ibid.

⁹ OECD, Anti-corruption reforms in Armenia, 4th round of monitoring of the Istanbul Anti-Corruption Action Plan, adopted at the ACN meeting on 4 July 2018, Paris, 141, «In practice, from the perspective of the monitoring team, these burdensome criteria for access to financial information would make it very difficult for corruption investigations to advance beyond the stage of mere receipt of allegations.»

ծերբազատվել կորուստից և այլ ֆինանսական հանցագործությունների քննության և մեղադրանքի պաշտպանության նպատակով ֆինանսական հաստատություններից ֆինանսական տեղեկատվության հասանելիության առնչությամբ գործող սահմանափակումներից»¹⁰

Հաշվի առնելով վերոշարադրյալը, ինչպես նաև այն համգամանքը, որ կոնկրետ երկրի փորձը կիրառելիս պետք է հաշվի առնել նաև այդ երկրի օրենսդրության ընդհանուր տրամաբանությունը, իրավապահ և դատական համակարգի կառուցվածքը, տնտեսության առանձնահատկությունները, մարդու իրավունքների և անձնական տվյալների պաշտպանության մակարդակը, սույն Նախագծով առաջարկվում է թվարկված հանցագործություններով հարուցված քրեական գործերով վերացնել բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկությունների, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման սուբյեկտային սահմանափակման պահանջը և որպես դրա հակակշիռ՝ Նախագծում ամրագրվել են ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների վրա հիմնված ամուր, որոշակի ու հստակ երաշխիքներ և կառուցակարգեր, որոնք մի կողմից միտված են անհամեմատ ավելի բարձր մակարդակի վրա դնել նշված տեղեկությունների պաշտպանվածությունը չհիմնավորված միջամտությունից, մյուս կողմից՝ չստեղծել անհամաչափ կամ անհաղթահարելի սահմանափակումներ հանցագործությունների կանխման, խափանման և դրանց բացահայտմանն ուղղված գործունեության ընթացքում:

1.4. Մասնավորապես, Նախագծում թվարկված հանցագործություններով հարուցված քրեական գործերով կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկությունների, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանվածությունն ապահովելու համար Նախագծով առաջարկվում է սահմանել հետևյալ երաշխիքները՝

ա) Տեղեկությունները ստանալու քննիչի միջնորդության բավարարման դեպքում դատարանը պետք է կայացնի պատճառաբանված որոշում,

բ) քննիչը Տեղեկություններն ստանալու միջնորդություն կարող է ներկայացնել բացառապես հսկող դատախազի համաձայնությամբ և զլխավոր դատախազի կամ նրա տեղակալի հաստատմամբ, այսինքն՝ բանկային գաղտնիքի սահմանափակումը ենթարկվում է նախնական դատախազական հսկողության ինչպես հսկող դատախազի, այնպես էլ զլխավոր դատախազի կամ նրա տեղակալի կողմից՝ նախքան դատական վերահսկողությունը,

գ) նախնական դատական վերահսկողության շրջանակներում դատարանը պետք է գնահատի, թե արդյոք քրեական գործով էական նշանակություն ունեցող հանգամանք պարզելու համար անհրաժեշտ է Տեղեկությունների բացահայտումը,

դ) դատարանն այդ հանգամանքը պետք է գնահատի և բավարարի քննիչի միջնորդությունը միայն այն դեպքում, երբ քննիչի կողմից ներկայացվել են ծանրակշիռ, քրեական գործի նյութերից բխող վերաբերելի, արժանահավատ և բավարար տվյալներ,

ե) դատարանը պետք է գնահատի նաև, թե արդյոք Տեղեկությունները միակ միջոցն են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու, և արդյոք դրանք ողջամտորեն հնարավոր այլ եղանակով պարզվել չեն կարող,

զ) դատարանի որոշման պատճենը քննիչը ոչ ուշ, քան քրեական գործը սույն օրենսգրքի 272-րդ հոդվածով սահմանված կարգով դատախազին ուղարկելուց կամ քրեական գործի վարույթը սույն օրենսգրքի 261-րդ հոդվածով սահմանված կարգով կարճելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված այն անձին, ում վերաբերյալ ստացվել են Տեղեկությունները: Նշված որոշումը կարող է բողոքարկվել Օրենսգրքով սահմանված կարգով: Այսինքն՝ նախագծում ամրագրված դատական ակտի բողոքարկման կառուցակարգը երաշխավորում է անձի՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում:

¹⁰ Ibid., «Remove existent limitations on access to financial information from financial institutions for the purposes of investigations and prosecutions of corruption offences and other financial crimes in line with the international standards.»

Այս առումով հարկ է նշել, որ Օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն ամբաստանյալը, նրա պաշտպանը և օրինական ներկայացուցիչը, մեղադրողը կամ վերադաս դատախազը, տուժողը, նրա ներկայացուցիչը, օրինական ներկայացուցիչը և իրավահաջորդը, իսկ սույն օրենսգրքի 376.1 հոդվածի 2-րդ և 2.1-րդ կետերով նախատեսված ակտերի դեմ՝ նաև արդարացվածը, դատապարտյալը, նրանց պաշտպանները և օրինական ներկայացուցիչները: Քաղաքացիական հայցվորը, քաղաքացիական պատասխանողը կամ նրանց ներկայացուցիչները դատական ակտն իրավունք ունեն բողոքարկելու քաղաքացիական հայցի մասով: Քաղաքացիական հայցի մասով վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն նաև տվյալ գործով կողմեր չհանդիսացող անձինք, եթե դատական ակտն առնչվում է նրանց շահերին: Կասկածյալը, մեղադրյալը, նրանց պաշտպանները և օրինական ներկայացուցիչները, ինչպես նաև դիմողն իրավունք ունեն վերաքննության կարգով բողոքարկելու սույն օրենսգրքի 376¹ հոդվածի 3-6-րդ կետերով նախատեսված դատական ակտերը:»:

«Հ վճռաբեկ դատարանը վերլուծության ենթարկելով կայակոչված իրավանորմը՝ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «(...) եթե անձը դատավարության մասնակից չէ, սակայն վարույթն իրականացնող մարմնի ընդունած ակտով խախտվում են նրա իրավունքներն ու օրինական շահերը կամ այդ ակտն առնչվում է նրա իրավունքներին և օրինական շահերին, ապա անձն իրավունք ունի դիմել թե՛ դատարան, և թե՛ վերադասության կարգով բողոքարկել դատական ակտը՝ իր իրավունքների պաշտպանության կամ խախտված իրավունքները վերականգնելու համար, իսկ դատարանները պարտավոր են քննության առնել նրանց դիմումները և բողոքները: (...) [Դ]ատական պաշտպանության հիմնարար իրավունքը վերաբերում է նաև այն անձանց, ովքեր դատավարության մասնակից չեն, սակայն վարույթն իրականացնող մարմինների ընդունած որոշումն առնչվում է նրանց օրինական շահերին, ենթադրաբար խախտում է նրանց իրավունքներն ու ազատությունները:

Վճռաբեկ դատարանն անձանագրում է նաև, որ դատավարության մասնակից չհանդիսացող անձանց դատական պաշտպանության իրավունքի իրացումը պետք է լինի իրական, այսինքն՝ անձն իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ենթադրյալ խախտման յուրաքանչյուր դեպքում պետք է դատարան դիմելու և իր խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա(...):» (տե՛ս Մարատ և Կարեն Սարգսյանների գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0282/01/09 որոշումը):

Վերոնշյալ դիրքորոշումը Վճռաբեկ դատարանը վերահաստատել և զարգացրել է իր մի շարք այլ որոշումներում (տե՛ս նաև Լևոն և Ռուբիկ Թարվերոյաններ գործով Վճռաբեկ դատարանի 2013 փետրվարի 15-ի թիվ ԱԿԴ2/0007/01/12, Արարատ Աբրահամյանի գործով Վճռաբեկ դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՏԴ/0009/01/15 և Գևորգ Գրիգորյանի գործով Վճռաբեկ դատարանի 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԿԴ2/0056/01/15 որոշումները):

1.5. Անդրադառնալով վերոնշյալ երաշխիքներից առաջինին (այն է՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու նպատակով առգրավում կամ խուզարկություն կատարելու թույլտվություն տալու վերաբերյալ քննիչի միջնորդությունը բավարարելու դեպքում դատարանի որոշումը պետք է լինի պատճառաբանված)՝ նախ հարկ է նշել, որ այն ուղղակիորեն փոխկապակցված է նախնական դատական վերահսկողության արդյունավետության խնդրին: Նշված խնդրի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանն իր 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/11/15 որոշման մեջ նշել է հետևյալը. «(...)Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է, որն ուղղված է դատական իշխանության սահմանադրական գործառույթների իրականացմանը գործի մինչդատական վարույթում՝ նպատակ ունենալով թույլ չտալ անձի իրավունքների և ազատությունների անօրեն և չհիմնավորված սահմանափակումներ, ինչպես նաև վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները: (...) Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումն այն մասին, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներն են՝

ա) դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների ու ազատությունների, օրինական շահերի պաշտպանության ապահովումը,

բ) դատավարության մասնակիցների և այլ անձանց խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնումը մինչդատական վարույթում: (տես՝ կետ 12)»:

Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ դատական ակտի պատճառաբանությունների հիմքում չեն կարող դրվել **վերացական, ընդհանուր բնույթի** դատողություններ: Պատճառաբանությունը պետք է կառուցվի տրամաբանորեն կապված և գործի փաստական հանգամանքներից բխող բացառապես **հստակ, որոշակի և համոզիչ** հետևությունների հիման վրա: Հակառակ պարագայում քրեական դատավարության խնդիրները չեն իրագործվի, իսկ տրամաբանությունը՝ կխաբխվի:

Տվյալ դեպքում նշված երաշխիքը դիտարկելով նախագծով ամրագրված մյուս երաշխիքների (մանրամասն տես վերևում կետ 1.4.) հետ համակարգային կապի մեջ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու նպատակով առգրավում կամ խուզարկություն կատարելու թույլտվություն տալու վերաբերյալ քննիչի միջնորդությունը բավարարելու դեպքում դատարանի պատճառաբանված որոշման **փաստական հիմքը** պետք է լինեն քննիչի կողմից ներկայացված **ժանրակչի, քրեական գործի նյութերից բխող վերաբերելի, արժանահավատ և բավարար տվյալները**: Այս համատեքստում, (ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկությունները, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են ստացվել խուզարկության կամ առգրավման վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա) կարևոր ենք համարում նշել, որ ՀՀ Վճռաբեկ դատարանը իր 2015 թվականի թիվ ԵՇԴ/0073/07/15 որոշման մեջ անդրադարձել է բնակարանի խուզարկություն կատարման համար անհրաժեշտ **փաստական և իրավական հիմքերին** սահմանելով բավականին բարձր չափանիշներ: Մասնավորապես, նշված որոշման մեջ անդրադառնալով խուզարկության փաստական հիմքին Վճռաբեկ դատարանը նշել է՝ «(...) **Անհրաժեշտ է ընդգծել, որ խուզարկության կատարման փաստական հիմք են «բավարար տվյալները»:** Այլ խոսքով՝ տվյալների առկայությունն ինքնին խուզարկության կատարման փաստական հիմք չէ, քանի դեռ չի համապատասխանում բավարարության վերաբերյալ պահանջին: (...) **խուզարկության կատարման փաստական հիմք կարող են հանդես գալ, որպես կանոն, քրեական գործի նյութերում առկա (...) ապացույցները (կասկածյալի, մեղադրյալի, տուժողի, վկայի ցուցմունքներ և այլն):** Ինչ վերաբերում է օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալներին՝ անհրաժեշտ է նշել, որ դրանք ապացույցների նկատմամբ ստորադաս բնույթ ունեն, սակայն որոշ դեպքերում անփոխարինելի և եզակի տվյալներ կարող են պարունակել (...), հետևաբար օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալները վարույթն իրականացնող մարմնի կողմից անտեսելն անթույլատրելի է: Միևնույն ժամանակ օպերատիվ-հետախուզական գործունեության առանձնահատկություններով (...) պայմանավորված՝ մի շարք դեպքերում վարույթն իրականացնող մարմինը զրկված է գնահատելու օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ձեռք բերված տվյալները: **Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված տվյալը հնարավոր է գնահատման ենթարկել, այն կարող է հանդես գալ որպես խուզարկության կատարման ինքնուրույն հիմք»:**

Ինչ վերաբերում է խուզարկության կատարման իրավական հիմքին դատարանը նշել է հետևյալը՝ «(...) **խուզարկության կատարման իրավական հիմքը խուզարկություն կատարելը թույլատրելու մասին դատարանի որոշումն է:** Ընդ որում, դատարանի որոշման համար առիթ է հանդիսանում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին նախաքննական մարմնի որոշումը: Ինչպես նախաքննական մարմնի, այնպես էլ դատարանի որոշումները պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված:

(...) **միջնորդության քննման արդյունքում դատարանը որոշում է կայացնում միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին՝ նշելով բավարարման կամ մերժման հիմքերը:** **Միջնորդության բավարարման դեպքում դատարանի որոշումը պետք է պարունակի նշում խուզարկության կատարման փաստական հիմքերի առկայության մասին, դրանց վերաբերելիության, արժանահավատության և բավարարության մասին հիմնավորումներ (...):»:**

Մեջբերված որոշման մեջ Վճռաբեկ դատարանի կողմից սահմանվում են քրեական դատավարության համակարգում անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ապահովող բավական բարձր չափանիշներ և երաշխիքներ, որոնք կոնկրետ դեպքում վերաբերում են բնակարանի խուզարկության կատարման համար անհրաժեշտ **փաստական և իրավական հիմքերին**: Այս տեսանկյունից կարևոր ենք համարում նշել, որ նշված երաշխիքները

վերաբերելի մասով (*mutatis mutandis*) ամբողջությամբ իմպլեմենտացվել են նախագծում (մասնավորապես խոսքը վերաբերում է քննիչի կողմից Տեղեկություններ ստանալու նպատակով առգրավում կամ խուզարկություն կատարելու թույլտվություն տալու վերաբերյալ ծանրակշիռ, քրեական գործի նյութերից բխող վերաբերելի, արժանահավատ և բավարար տվյալներ ներկայացնելու, ինչպես նաև դրա հետ փոխկապակցված դատարանի որոշման պատճառաբանվածության պահանջին) և նախագծում ամրագրված մյուս երաշխիքների հետ միասին ուղղված են ավելի բարձր մակարդակի վրա դնել Տեղեկությունների պաշտպանվածությունը: Հարկ է անդրադարձնալ ևս մեկ երաշխիքի, այն է՝ Տեղեկությունների սահմանափակումը ենթարկվում է նախնական դատախազական հսկողության ինչպես հսկող դատախազի, **այնպես էլ գլխավոր դատախազի կամ նրա տեղակալի կողմից** նախքան դատական վերահսկողությունը:

Այս առումով պետք է նշել, որ **Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2000 թվականի հոկտեմբերի 6-ի «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի վերաբերյալ» թիվ Rec(2000)19 հանձնարարականի** 1-ին հոդվածի համաձայն՝ դատախազները պետական իշխանությամբ օժտված մարմինների ներկայացուցիչներ են, ովքեր հասարակության անունից և **հանուն հանրային շահի** ապահովում են օրենքի կիրառումը բոլոր այն դեպքերում, երբ օրենքի խախտումը հանգեցնում է քրեական սանկցիաների՝ **հաշվի առնելով ինչպես անձի իրավունքները, այնպես էլ քրեական արդարադատության համակարգի պատշաճ արդյունավետությունը:**

Նշվածի հիման վրա կարևոր ենք համարում ընդգծել, որ նախագծում ամրագրված դատախազական հսկողության բացառիկ կառուցակարգը, մինչդեռ սակայն վարույթի նկատմամբ դատական վերահսկողության հետ միասին, բխում է ինչպես արդարադատության արդյունավետության, այնպես էլ անձանց իրավունքների պաշտպանության շահերից, քանի որ պաշտպանվածության անհամեմատ ավելի բարձր մակարդակի վրա է դնում Տեղեկությունները չհիմնավորված միջամտությունից և դրանով իսկ ապահովվում է հանրային և մասնավոր շահերի անհրաժեշտ և արդարացի հավասարակշռությունը:

1.6. Նախագծում առկա իրավակարգավորումները անհրաժեշտ է դիտարկել նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 8-րդ հոդվածի լույսի ներքո: Մասնավորապես նշված հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համատեքստում մեկնաբանելով «անձնական կյանք» եզրույթը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) արձանագրել է, որ այն լայն հասկացություն է և ենթակա չէ սպառիչ սահմանման: Եվրոպական դատարանը գտել է, որ անձնական կյանքի ոլորտն ընդգրկում է մարդու առողջությունը, ֆիզիկական և հոգեկան ամբողջականությունը: Անձնական կյանքի իրավունքը ներառում է նաև անհատական զարգացումը, այլոց և ընդհանրապես արտաքին աշխարհի հետ հարաբերություններ հաստատելը և զարգացնելը (տե՛ս NADA v. SWITZERLAND գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 10593/08, կետ 151):

Վճռաբեկ դատարանը թիվ ԱՎԴ/0015/07/13 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «*«Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը մեկնաբանելով ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի և դրա վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ սպասարկման կամ այլ գործառնությունների կապակցությամբ բանկի և անձի միջև հաստատված հարաբերությունները՝ որպես արտաքին աշխարհի հետ անձի*

հարաբերությունների տարատեսակ, հանդիսանում են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված մարդու անձնական կյանքի մաս: Հետևաբար, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունները՝ որպես մարդու անձնական կյանքի մաս, անձեռնմխելի են և դրանց ստացման վրա տարածվում են ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածում, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված սահմանափակումները» (տե՛ս ՎՃՁաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԴ/0015/07/13 որոշումը, կետ 16):

Նախագծում առկա իրավակարգավորումները դիտարկելով վերոնշյալ իրավական դիրքորոշումների համատեքստում՝ հարկ է ընդգծել, որ Տեղեկությունների պահպանության իրավական կանոնակարգումը նախագծում իրականացվել է այն հաշվով, որ բացառվի դրա երաշխավորման պահանջից ցանկացած կամայական նահանջ՝ հիմք ընդունելով ՀՀ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները, իրավական և ժողովրդավարական պետության սահմանադրական սկզբունքները, տնտեսական գործունեության ազատությունը և ազատ տնտեսական մրցակցությունը, ինչպես նաև մարդու անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Նախագծով Օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասը լրացվել է նոր պարբերությամբ, որով առաջարկվում է թվարկված հանցագործություններով հարուցված քրեական գործերով վերացնել բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկությունների, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման համար սահմանված սուբյեկտային սահմանափակումը և դրան զուգահեռ դատական վերահսկողության շրջանակներում նախատեսել հետևյալ երաշխիքները.

1. քննիչը բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու միջնորդություն կարող է ներկայացնել բացառապես դատախազի համաձայնությամբ և գլխավոր դատախազի կամ նրա տեղակալի հաստատմամբ, այսինքն՝ բանկային գաղտնիքի սահմանափակումը ենթարկվում է նախնական դատախազական հսկողության ինչպես հսկող դատախազի, այնպես էլ գլխավոր դատախազի կամ նրա տեղակալի կողմից նախքան դատական վերահսկողությունը,
2. քննիչի միջնորդության բավարարման դեպքում դատարանը պետք է կայացնի պատճառաբանված որոշում, որում պետք է գնահատի, թե արդյոք քրեական գործով էական նշանակություն ունեցող հանգամանք պարզելու համար անհրաժեշտ է նշված տեղեկությունների բացահայտումը,
3. Դատարանն այդ հանգամանքը պետք է գնահատի քննիչի կողմից ներկայացված ծանրակշիռ, քրեական գործի նյութերից բխող վերաբերելի, արժանահավատ և բավարար տվյալների հիման վրա,
4. Դատարանը պետք է գնահատի նաև, թե արդյոք Տեղեկությունները միակ միջոցն են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու և արդյոք դրանք ողջամտորեն հնարավոր այլ եղանակով պարզվել չեն կարող:
5. Դատարանի որոշման պատճենը քննիչը ոչ ուշ, քան քրեական գործը սույն օրենսգրքի 272-րդ հոդվածով սահմանված կարգով դատախազին ուղարկելուց կամ քրեական գործի վարույթը սույն օրենսգրքի 261-րդ հոդվածով սահմանված կարգով կարճելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված այն անձին, ում վերաբերյալ ստացվել են տեղեկությունները: Նշված որոշումը կարող է բողոքարկվել Օրենսգրքով սահմանված կարգով:

Նախագծով առաջարկվել է նաև «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասում կատարել համապատասխան փոփոխություն:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք

Նախագիծը մշակվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

Առաջարկվող օրենսդրական փոփոխությունների պայմաններում Նախագծով թվարկված հանցագործություններով հարուցված քրեական գործերով բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկությունների, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման համար սահմանված սուբյեկտային սահմանափակումը կվերացվի: Միաժամանակ չեն ստեղծվի անհամաչափ կամ անհաղթահարելի սահմանափակումներ հանցագործությունների կանխման, խափանման և դրանց բացահայտմանն ուղղված գործունեության ընթացքում: